ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

«ՀՌԱՀ-ՊԸԾՁԲ- 16/1» ծածկագրով պարզեցված ընթացակարգի գնահատող հանձնաժողովի բացման նիստի

ք. Երևան 13.01.2016 թ.
ժ.10:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Ս.Գասպարյանը ԳՊ/ԳԱՊ

Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Վարդանյանը ԳՊ/ԳԱ

Ա.Ներսիսյանը ԳՊ/ԳԱ

Ա. Թաթոյանը ԳՊ/ԲԱ

Է. Գրիգորյանը ԳՊ/ԲԱ

Հանձնաժողովի քարտուղար՝ Ջ. Զուռնաչյանը ԳՊ/ՄՀՄ:

1. Պարզեցված ընթացակարգի հայտերի բացման վայրը, օրը և ժամը

«ՀՌԱՀ-ՊԸԾՁԲ- 16/1» ծածկագրով պարզեցված ընթացակարգի հայտերը բացվել են Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի շենքում՝ Իսահակյան 28 հասցեով՝ Armeps.am էլեկտրոնային համակարգի՝ միջոցով 2016 թվականի հունվարի 13-ին, ժամը 10:00-ին:

2. Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները և գտնվելու վայրի հասցեները.

1	«ՏԵԼԵՄԵԴԻԱԿՈՆՏՐՈԼ» ՓԲԸ	իրավ. հասցե՝ ՀՀ, ք.Երևան,Կորյուն փ.21շ,բն15 գործ. հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Աղբյուր Սերոբ 3ա հեռ. 010 321515 էլ.փոստ info@gfk.am.

3. Տվյալներ ներկայացված հայտերը ԳԱ/ԲԱ կողմից սահմանված կարգի պահանջներին համապատասխան բացելու մասին

- «ՏԵԼԵՄԵԴԻԱԿՈՆՏՐՈԼ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտը համապատասխանում է սահմանված կարգի պահանջներին, քանի որ այն ընդունվել է համակարգի կողմից և ճանաչվել անցողիկ:

4. Տվյալներ՝ բացված հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության և հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմման մասին.

- «ՏԵԼԵՄԵԴԻԱԿՈՆՏՐՈԼ» ՓԲԸ -ի կողմից ներկայացված հայտում պահանջվող փաստաթղթերը առկա են և համապատասխանում են հրավերով սահմանված պայմաններին:

5. Մասնակիցների կողմից առաջարկված գները.

Չափաբաժնի համարը	*Գնման առարկայի անվանումը*	*Մասնակցի անվանումը և առաջարկված գինը՝ (ՀՀ դրամ)*	
		«ՏԵԼԵՄԵԴԻԱԿՈՆՏՐՈԼ» ՓԲԸ	
		առանց ԱԱՀ-ի	Ներառյալ ԱԱՀ-ն /20%/
1	Մոնիտորինգի իրականացման ծառայություններ	10000000.0 (Տաս միլիոն)	12000000.0 (Տասներկու միլիոն)

6. Տեղեկություններ հայտերի հետկանչման կամ փոփոխությունների, հայտերի վերաբերյալ կատարված հարցումների մասին

Հայտերի հետկանչում կամ փոփոխություններ, հայտերի վերաբերյալ կատարված հարցումներ և պատասխաններ չեն եղել:

7. Հանձնաժողովը որոշեց՝

7.1 Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասը, 2-րդ մասի 1-ին ենթակետը և ՀՀ կառավարության 2011թվականի փետրվարի 10-ի N168-Ն որոշմամբ հաստատված կարգի 44-րդ կետի 5-րդ ենթակետը՝

ա/ բավարար գնահատել «ՏԵԼԵՄԵԴԻԱԿՈՆՏՐՈԼ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտը.

բ/ 1-ին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել «ՏԵԼԵՄԵԴԻԱԿՈՆՏՐՈԼ» ՓԲԸ-ին:

7.2 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2011թվականի փետրվարի 10-ի N168-Ն որոշմամբ հաստատված կարգի 47-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերը՝

ա/ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն հարցում ներկայացնել 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի /քանի որ մեկ մասնակից է հայտ ներկայացրել/ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ:

բ/ ծանուցել «ՏԵԼԵՄԵԴԻԱԿՈՆՏՐՈԼ» ՓԲԸ-ին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

7.3 Փաստաթղթերի գնահատման արդյունքերի հրապարակման նիստը անցկացնել հրավերի 7.5 կետով նախատեսված հարցման մասին եզրակացությունը ստանալու և 1-ին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից հրավերով որակավորման փաստաթղթերը ներկայացնելու և գնահատման թերթիկները հանձնաժողովի անդամներին տրամադրելու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում:

Նախագահ՝ _____ Ս. Գասպարյան

Անդամներ՝ _____ Ա. Վարդանյան

_____ Ա. Ներսիսյան

_____ Ա. Թաքոյան

_____ Է. Գրիգորյան

Քարտուղար՝ _____ Ջ. Զուռնաչյան